Արձանագրություն N2
ՀՀՇՄՀՀ-ԳՀԱՇՁԲ-02/19
ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրություն

գ.Հայկավան 30 սեպտեմբերի, 2019թ., ժ 13:00,
Շիրակի մարզ գ.Հայկավան 1-ին փող. շենք 9

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Բայինդուր Ասատրյան- համայնքի ղեկավարի տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝ Արմինե Հակոբյան- համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,
Ստեփան Թադևոսյան- համայնքի ավագանու անդամ,
Հովհաննես Մարտիրոսյան- համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

- <<ՀՀՇՄՀՀ-ԳՀԱՇՁԲ-02/19>> ծածկագրով գնանշման հարցման միջոցով մրցույթի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝
1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 23.09.2019թ. էլեկտրոնային եղանակով տեղադրվել է www.gnumner.am ինտերնետային կայքում:
1.2 ՀՀ Շիրակի մարզի Հայկավան համայնքի գերզմանատան ցանկապատի վերանորոգման աշխատանքների << ՀՀՇՄՀՀ-ԳՀԱՇՁԲ-02/19>> ծածկագրով գնանշման հարցման միջոցով համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Հասցեն | Ներկայացրած գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ | Ներկայացրած գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ-ն /ՀՀ դրամ | Նախահաշվային գին |
| 1 | <<Սիմա-Շին>> ՍՊԸ | Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Արևիկի խ/6, թիվ 4/2 | 4 850 360 | 5 820 432 | 5 904 350 |
| 2 | Ա/Ձ Գոռ Սարգսյան | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տ. Ճարտարապետի փ. 7/6 2 | 5 800 000 | 5 800 000 | |

1.3 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

- <<Սիմա-Շին>> ՍՊԸ-ի և Ա/Ձ Գոռ Սարգսյանի ներկայացրած գնային առաջարկները Պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գնի սահմանում են, <<Սիմա-Շին>> ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը նվազագույնն է /<<Գնումների մասին ՀՀ օրենքի>> 34-րդ հոդվածի 3-րդ մաս՝ Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման/:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

1.4 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող փաստաթղթերը: Փաթեթում ներկայացված փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

Ընդունվել է որոշում կողմ – 4, դեմ – 0

2. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Սիմա-Շին>> ՍՊԸ-ին:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<Սիմա-Շին>> ՍՊԸ-ին ծանուցել, որ անհրաժեշտ է 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի էլ. հասցեին /arm.sargsyan1992@gmail.com/ ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող նախատեսված փաստաթղթերը:

Ինչպես նաև էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվելու Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը իրականացնել դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------------------------- Բայինդուր Ասատրյան

Անդամներ՝

---------------------------- Արմինե Հակոբյան

---------------------------- Ստեփան Թադևոսյան

---------------------------- Հովհաննես Մարտիրոսյան

Քարտուղար՝ ---------------------------- Արմինե Սարգսյան